

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅ. *Երկերի ժողովածու*, վեց հատորով, հատոր առաջին, Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962, 391 էջ, գինը 70 կ.:

Ուղեհաճախ մեծ բանաստեղծ Նղիշե Չարենցի երկերի գիտական հրատարակության առաջին հատորը, որին կհետևեն ևս հինգ հատորներ, ընդգրկում է 1913—1920 թթ. դրած սրա լիրիկական բանաստեղծությունները: Լկյգ բանաստեղծությունները Չարենցը մեծ մասամբ գետնից էր 1922 թ. իր մոսկովյան երկհատորյակի առաջին հատորում, որի առաջաբանում նա խոստովանում է, որ առանց դրանց ընթերցողի համար հասկանալի չի լինի իր գաղափարական-ստեղծագործական-դեղատաղանդական դավանանքի զարգացման կորագիծը: Լկյգ խոստովանությունը իր նշանակությունը պահպանում է նաև այժմ ներկայացվող հատորում: Երկը գտած գրեթե բոլոր բանաստեղծությունների համար, շնայած ավելի քան քառասուն տարիների ընթացքում մեծապես փոխվել են Չարենցի երկերի վերաբերյալ գրականագիտական հայացքները:

Հատորի գիտական տեքստը, փաստերով ուսուցված հարուստ ծանոթագրությունները և բանաստեղծի իմաստալից տարբերակները հնարավորություն են ստեղծել ճշգրտությամբ հետևելու Չարենցի ստեղծագործական բարդ ճանապարհին:

Բրականագիտությունը իրավացիորեն նշել և նշում է, որ Չարենցը գրական ասպարեզ է մտել ժամանակաշրջանի տարրեր, երբեմն իրադրամբ գրական զարգացման խաչողիկներով: Ներկա հրատարակության առաջին հատորի ընթերցողը կզգա և՛ ազգային, և՛ սիմվոլիստական, և՛ պառնասականների պոեզիայի ազդեցությունները: Սակայն, նույնիսկ այստեղ անառարկելի է կազմավորվող բանաստեղծի հուժկու անհատականությունը: Չարենցը սովորեցությունների մեջ անգամ եղել է ինքնատիպ: Վերջին հաշվով ոչ թե նա ծառայել է ազդեցություններին, այլ ազդեցություններն են ծառայել նրան. կարելի է որոշակիությամբ նկատել, որ, օրինակ, սիմվոլիստական պոեզիային նա ոչինչ չի տվել, իսկ սիմվոլիստական պոեզիան նրա բանաստեղծական տողին հաղորդել է փայլ ու երաժշտականություն: Լկյս ակադեմիկոսից առանձին հետաքրքրություն է

ներկայացնում գրախոսվող հատորի «Ծանոթագրություններ և տեքստային տարբերություններ» ընդարձակ բաժինը, որտեղ բանաստեղծական տողի հղկման ու կատարելագործման հայտնի ու մինչև օրս անհայտ բազմաթիվ փաստեր են բերված, որոնք աներկրայելիորեն ցույց են տալիս, թե Չարենցը ստեղծագործական ինչպիսի ծանր երկունք է ապրել: Լկհա «Էմալե պրոֆիլը Չարենցի առաջին բանաստեղծության հետևյալ տողերի ինքնագրերը.

Նվ այդ երգով հմայված՝ սիրտս քախծում է լուին

Նվ դուք գիտեք, որ սիրուց տառված, վառված իմ հոգում

Հնչում են ջիւնջ ու թեթև, թափ թրթիռներ ջութակի:

Լկյս բանաստեղծը իրենց վերջնական տեսքով ընթերցողին են ներկայանում ընդգծված բառերի հետևյալ փոփոխությամբ.

Նվ այդ երգով հմայված՝ սիրտս տխուրում է լուին:

Նվ դուք գիտեք, որ սիրուց հիվանդացած իմ հոգում

Լկս միշտ լսում եմ թեթև, թափ թրթիռներ ջութակի:

Լկհա և շտրքի համանուն բանաստեղծության մէջ արտահայտված արտաքուստ աննշան, իսկ ներքուստ նշանակալից փոփոխությունը.

Լկս կուզեմ երգեր կապել...

Կուզեի երգեր կապել...

Բայի ըղձական եղանակի շեշտվածությամբ բանաստեղծը անհամեմատ խոր իմաստ է հաղորդում իր ցանկությանը՝ որքան սկուզեի երգեր կապել:

Պոետական արվեստի հնարաններին և գաղտնիքներին տիրապետելու բնական ցանկությամբ Չարենցը դիմել է օտար երևույթներին: Կասկածից վեր է, որ սիմվոլիստները (և հատկապես պառնասականները) հղկեցին, նոր փայլ և շքեղություն տվեցին բանաստեղծական ձևին, անհամեմատ քիչ մտահոգվելով երկի գաղա-

փարական-սոցիալական նպատակադրվածությամբ: Գեղարվեստական ստեղծագործության ձևի ասպարեզում նրանց որոնումները ի վերջո հանգեցրին «մաքուր արվեստի» անընդունելի և անհեռանկար տեսությանը: Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում արտահայտվեց ո՛չ թե այդ տեսությունը՝ թեկուզ և իր նախնական կերպարանքով, այլ նրա հիմնադիրների վարպետությունը: Իրկերի ժողովածուի առաջին հատորի գիտական ապարատը դրացայտուն արտահայտությունն է Առհասարակ, Չարենցին շատ են հետաքրքրել բանաստեղծական վարպետության հետ ուղղակիորեն առնչվող հարցերը: Գրվածելի է, որ նա, սկսելով սխմվորիստներից կամ պառնասականներից, վերջացրեց Պուշկինի և Թումանյանի հանձարի երկրպագությամբ: «Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ Ն.Ն.-ին, գրված Երևանից» (1929) բանաստեղծության մեջ Չարենցը խոստովանում է, որ կյանքի հարստությունը, մարդկային հոգին գեղարվեստորեն կերպավորելու համար «Քնարն է պետք Ալեքսանդրի»:

Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները մեծ ցավ ու վիշտ էին պատճառում հայրենասեր և մարդասեր բանաստեղծին: Նրա սրտի տազնապները մեծապես արտահայտվեցին 1915—1916 թթ. գրված «Դանթեական առասպել» պոեմում, որը հայ գրականության մեջ ժողովրդի, հայրենիքի և իմպերիալիստական պատերազմի թեմայի առաջին գեղարվեստական լայնակտավ արտահայտությունն էր: Պետք է նկատել, որ պոեմի և գիտական հրատարակության առաջին հատորի լիթկական բանաստեղծությունների միջև մեծ ընդհանրություններ կան, ընդհանրություններ ու թե թեմայի նույնության, այլ դրա արձագանքների իմաստով: Հայ ժողովրդի մոռյալ կոնքր, ժողովրդի և հայրենիքի վտանգված գոյության տազնապները իրենց կնիքն են դրել Չարենցի հատկապես վաղ շրջանի լիթկական բանաստեղծությունների վրա: Բանաստեղծի նախասովետական շրջանի քնարերգությունը ներկայացվել է ընթերցողին այսօրվա գիտական պահանջներով, որի շնորհիվ էլ հնարավորություն է ստեղծվում նրա վաղ տրամադրությունները գիտել ու արժեքավորել ոչ թե անջատ-անջատ, այլ մի կուռ շղթայի մեջ:

Ի՞նչ է փնտրում Եղիշե Չարենցը և ինչպե՞ս է փնտրում, մտքի ու պոպոցմունքների ինչպիսի գալարումներով: Բանաստեղծությունների տարբեր, երբեմն իրարամերձ տրամադրությունների, գույների, երանգների, շափերի մեջ ոսկեծույլ զանգի նման ղողանջում է հայրենի երկրի նկատմամբ անհուն մի կարոտ, որն ուղեկցվում է մարդու անդեպ ազնիվ սիրով, հավատով

և երկրպագությամբ: Հասկանալի է, որ կարոտի զգացումը անառարկելիորեն ենթադրում է ինչ-որ կոնկրետ մի բանի բացակայությունը, որը կար, գոյություն ուներ ու հանկարծ անհավատալիորեն, անբարոնելիորեն հեռացել է, չկա: Միտքը, սիրտը, հոգին չեն հաշտվում նման չգոյության հետ ու թռչում են դեպի հեռուները, այդ ճանապարհին սփռելով իրենց ամենանվիրական գանձերը: Հատկապես հայրենիքի նկատմամբ այդ ինքնարացահայտումը մեծ շափերի, փայլատակումների ու բսդգրկումների է հասնում:

Չարենցի առաջին շրջանի բանաստեղծությունները գրախոսվող հատորում ներկայացված են իրենց ստեղծման տեղով և թվագրությամբ: Այդ վայրերը և թվականները ստուգված, ճշգրտված են արխիվային նյութերով ու ալբելի քան երկու տասնամյակ ընդգրկող պրական-քաղաքական մամուլով: Առանց բացառության դրանք երևան են հանվել գրավոր աղբյուրների (ինքնագիր, նամակ, առաջիկ հրատարակություն և այլն) հիման վրա, որի շնորհիվ էլ ունեն գիտական արժեք: Հենվելով այդ թվագրությունների և հատկապես վայրերի վրա, կարելի է մի նոր կողմից էլ ցույց տալ բանաստեղծի առաջին շրջանի քնարերգության գաղափարական հագեցվածությունը ու տարողությունը:

Այդ բանաստեղծությունները մեծ մասամբ գրված են հայրենիքում՝ Կարսում կամ Երևանում, որի շնորհիվ էլ գրանցում արտահայտված կարոտը մեծապես տարրերվում է հանրահռչակ «անտունիներում» արտահայտված կարոտից: Չարենցը երկիր Նաիրին փնտրում է ոչ այլ տեղ, քան բուն իսկ Հայաստանում: «Անտունիներում» հայրենիքի հանդեպ պատկերված հաշտվողական վշտին հակառակ, Չարենցի այս թվականների լիթկական բանաստեղծությունների վիշտն ունի անհաշտվողականության, բողոքի, բմրոստության գույներ ու երանգներ: Բանաստեղծը չի հաշտվում իր ժողովրդի և հայրենիքի վտանգված գոյության հետ, պատերազմի արհավիրքների և մարդկային անարդարության մեջ տենդագին փնտրում է նրանց հաղարամյա հոգին ու պատկերը: Չարենցի վաղ շրջանի բանաստեղծություններում հանդես եկող լիթկական հերոսի մտորումները կյանքի, աշխարհի, սիրո մասին, գեղեցիկ կնոջ անհասանելի հմայքները, ծիածանի խաղերը և այլն, իրենց մեջ կրում են շատ ավելին, քան առաջին ծանոթությունից կարող է թվալ: «Երեք լերդ տխրապալուկ աղջկան» շտրքի առաջին բանաստեղծությունը, որն ունի «Ճամփին...» վերնագիրը, իր տրամադրությամբ խիստ ընդորոշ է Դա կարծես մի յու-



բահատուկ մուտք է դեպի հայրենի եզերքը, որը տակավին գտնվում է անորոշության ու անհայտության մեջ: Լիբիկական հերոսը համակված է գալիք հայտնագործությունների ողբերգականությամբ և հերոսականությամբ: Պահը իր մոռյալ պոյների մեջ անգամ հանդիսավոր է: Եվ հանկարծ պոռթկում է հայրենի երկրի մասին շքեղ մի երազ: Եա դեռ հայտնագործությունը չէ, բանի որ այդպես անակրեկալ տրամաբանական չէ: Դա պարզապես դորշ, ոլորապտույտ, միգամած, տաղտուկ, ԼՅԵ ոչ խավար ճանապարհին հրաշքով ճառագած լույսի վարար: մի շող է, որը գալիս է հեռու հեռվից: «Հրո երկիր» շարքի հատկապես առաջին, երկրորդ, յոթերորդ բանաստեղծությունները պետք է դիտել ոչ այլ կերպ, քան կորչող ու գտնվող հայրենիքի կապի արտահայտություն բնդհանրապես, և լիբիկական հերոսի կողմից իր հայրենիքն հայտնագործելու անհատակ ցանկության ու պատրաստակամության արտահայտություն՝ մասնավորապես:

1915 թ. Չարենցը գրում է «Տեսիլաժամեր» բանաստեղծությունների շարքը, որին հետևում են «Լիբիկական բալլադներ» և հանրահռչակ «Ծիածանը», որը նվիրված է սիրած աղջկան՝ Կարինե Քոթանճյանին: Այստեղ առաջին անգամ հայրենի եզերքը, թեև անմարմին, աննյութ, սակայն որոշակի գծագիր է ստանում: Նա արդեն ինչ-որ բան է՝ տխրաթյուն, արև, զանգերի զողանք, կարոտ, ճամփա և աղջիկ, որը աստիճանաբար օժտվում է ծիածանի բոլոր գույներով: Աղջկա կերպարանով հայրենիքի պատկերը Չարենցի համար խիստ բնորոշ է, հանգամանք, որ մինչև օրս պակաս ուշադրության է արժանացել: Նման բանաստեղծություններում ավելի շատ տեսել են անձնական և ավելի քիչ՝ հասարակական բովանդակություն: 1919 թ. գրված «Տաղ անձնական» բանաստեղծությունը միծապես օգնում է հասկանալու այդ կարգի բանաստեղծությունների ներքին բովանդակությունը: Նույն Կարինե Քոթանճյանին ուղղված հրաժեշտի խոսքերը «Տաղում» ոչ այլ ինչ են, եթե ոչ հայրենի տանը ուղղված հրաժեշտի խոսքեր, որոնք ամակված են սիրած աղջկա նկատմամբ ջերմ զգացմունքներով և բաժանման ցավով:

1910-ական թվականների վերջին Չարենցի հիասթափությունը «կապույտ» երազներից և նոր եզերքի հասնելու նրա բուռն ձգտումը հանդեպնում են ստեղծագործական նոր հայտնագործությունների: «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Հրո երկիր», «Տեսիլաժամեր», «Լիբիկական բալլադներ», «Ծիածանը» բանաստեղծական շարքերին ամիջապես հետևում են 1918—1920 թթ. գրված «Ողջակիզվող կրակ»

բնդհանուր խորագրով բանաստեղծությունները: «Կապույտ կարոտը սակայն շտվեց ոչինչ...», — բացականչում է Չարենցը այս շարքի բանաստեղծություններից մեկի վերջնատողում: Բանաստեղծին ակնհայտորեն չի գոհացնում իր որոնումների արդյունքը: Ուղեղով և նյարդերով նա զգում է բոլորովին ուրիշ, նոր ու հարազատ հայրենիքի գոյությունը: «Ողջակիզվող կրակում» միանգամից փոխվում են գույները, ամեն ինչ դառնում է «բոլոր արև», «հրակամիր մայրամուտ», և նախորդ շրջանի ծիածանի սառը, տխուր ստվերները աստիճանաբար տեղի են տալիս լույսի ու ջերմության առաջ: Բանաստեղծությունների այս շարքում հայրենիքը հանում է անհամեմատ շոշափելի գույներով, նրա պատկերը ստեղծվում է պատմական պրոցեսի որոշակի գիտակցությամբ, կերպարը ավելի է մերձենում ոեակ իրականությանը՝ երկիր նախրի տագնապալից օրերին: «Ողջակիզվող կրակում» հայրենիքի թեման լրացվում, հարստացվում է մի նոր երգով: Եա ռեյուզիոն մեծ իրադարձությունների արձագանքն է, որը բանաստեղծը խտացնում է «կարմիր նժույգների» պատկերի մեջ: Այստեղից սկսած, ավելի ճիշտ, այս բանաստեղծական շարքից սկսած, փոխվում են Չարենցի պոեզիայի գույները, երանգները, ութմը, չափը, տրամադրությունները, մեջտեղ է գալիս լիբիկական հերոսի ռոմանտիկ հերոսականությունը, հայրենիքի էությունը խորհրդանշում է ոչ թե հիվանդոտ «կապույտ աղջիկը», այլ «հրե ուրուն», «կարմիր քայլերգի հնչյունը», «բրոնզե բույրը» և «բրոնզե հարսը»: «Ողջակիզվող կրակում» ծրագրային իմաստ և նշանակություն ունի «Վերադարձ»-ը, որտեղ անհամեմատ ավելի որոշակի է դառնում լիբիկական հերոսի շրջադարձը «կապույտ» աշխարհից դեպի իրական կյանքի երևույթները:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կյանքի հորձանուտում բանաստեղծը զգում է գեղարվեստական նոր ձևերի ու հնարանքների պահանջը և հենց այս տեսակետից էլ սպանիշ ծագրի ենթարկում մեռած գեղեցկության էսթետիկան: Անժխտելի է գրախոսվող հատորի «Փողոցային պրուհուհուն» և հատկապես «Համալս պրոֆիլը Չեր» բանաստեղծական շարքերի նրմանօրինակ ուղղվածությունը: Ավելին, Չարենցը ոչ միայն ժխտում է «մաքուր արվեստի» ամեն մի դրսևորում, այլև հանգես է բերում կյանքի ու արվեստի փոխադարձ կապի որոշակի գիտակցություն, որը սովետական գրականության արշալույսին խաղաց իր մեծ ու արժեքավոր դերը: 1921 թ. գրված «Կարմիր սունտ» բանաստեղծությունը, որի համար բնաբան է դարձել Վ. Բրյուսովի «Поэт всегда с

«ЮДЬМИ, КОГДА ШУМИТ ГРОЗА» հանրահռչակ տողը, պարզ և որոշակիորեն հաստատում է գեղարվեստական ստեղծագործության և կյանքի կապը, որը Չարենցի համար մեկրեմիշտ դառնում է ոչնչով չփոխարինվող գեղագիտական դավանանք:

Մի կողմից կյանքի հետ մերձեցումը, մյուս կողմից գեղարվեստական նոր, դարի ու ժամանակի ոգուն համապատասխան ձևերի ու միջոցների յուրացումը օգնում են Չարենցին տեսնելու և գնահատելու հայ բաղմազարյան գրականության ավանդները, այդ թվում նաև՝ մեծ Մայաթ-Նովայի պոեզիան: Այստեղ խոսքը վերաբերում է 1920—1921 թթ. գրված «Տաղարան» ընդհանուր խորագրով բանաստեղծությունների շարքին. որը գիտական հրատարակության առաջին հատորի տրամաբանական հանգույցներից է: Չարենցը դիմում է ժողովրդական հնարաններին, պատկերներին, փրիսոփայությանը, լեզվամտածողությանը ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի նպատակով՝ Հայրենիքի պատկերը, մարդկային հույզերի,

ապրումների, սպասումների, հիասթափությունների, հաղթանակների երգը սրանով չի վերջանում: Ընթանալով գծավորությամբ գտնված ձանապարհով՝ Չարենցը այնուհետև ստեղծում է սովետահայ պոեզիան զարդարող իր լավագույն գործերը:

Միշտ չէ, որ գիտական հրատարակության իրականացման բարդությունները պայմանավորվում են հեղինակի ապրած ժամանակաշրջանի հեռավորությամբ: Պատահում է, որ հեղինակի կյանքի ոլորապտույտները և ստեղծագործությունների բարդությունը ևս հրատարակիչներին անխուսափելի դժվարությունների առաջ են կանգնեցնում: Այդպիսի հեղինակ է նաև Նդիշե Չարենցը: Ահա թե ինչու պետք է նշել մեծ բանաստեղծի երկերի ներկա հատորը կազմող և ծանոթագրող Ա. Ջաքարյանի տեղատարանական-բանասիրական ուշադրավաշխատանքը, որը համապատասխանում է գիտական հրատարակությանը ներկայացվող պահանջներին:

Ն. ԱԳԱՅԱՆ

Э. Г. ТУМАНЯН, *Очерки исторического развития надежных форм новоармянского литературного языка*, Издательство академии наук СССР, Москва, 1962, 190 стр., цена 1 р. 05 к.

Է. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Հայ նոր գրական լեզվի հոլովական անների պատմական զարգացման ակնարկներ*, ՍՍՄՄ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Մոսկվա, 1962, 190 էջ, գինը 1 ռ. 05 կ.:

Ռուսաց լեզվով գրված հայագիտական աշխատությունները ուրույն տեղ են զբաղեցնում հայ բաղմաճարուստ լեզվաբանական գրականության մեջ. դրանք կարևոր նշանակություն ունեն մասնավորապես հայ լեզվաբանական մտքի նվաճումների մասսայականացման տեսակետից: Այդ իմաստով էլ միանգամայն շնորհակալ եմ ուզում լինել գործ է կատարել ՍՍՄՄ գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտը, հրատարակելով բանասիրական գիտությունների թեկնածու Է. Գ. Թումանյանի «Հայ նոր գրական լեզվի հոլովական ձևերի պատմական զարգացման ակնարկներ» աշխատությունը:

Հեղինակն այստեղ քննության նյութ է դարձրել հայագիտության համար տեսական ու պրոծնական նշանակություն ունեցող այն հարցը, բնականաբան պատմական զարգացման ընթացքում ի՞նչ փոփոխություններ ու կերպաշաղկապություններ են կրել հայերենի հոլով-

ական ձևերը, և ինչպե՞ս է ձևավորվել արեւելահայ գրական լեզվի հոլովման ու հոլովական համակարգը:

Սյլ հարցերը քննելիս Է. Թումանյանը առաջնորդվել է գիտական ճիշտ սկզբունքով. շատ լավ բմրոնելով, որ ժամանակակից հայերենի հոլովման ու հոլովական համակարգը, իրոք, բավական երկարատև զարգացման ընթացքում լեզվի կրած ձևափոխությունների արգասիք է, նա հաճախ է բերել պատմական ստույգում և աշխատել հենց այդ նույն դիրքերից պատկերել հոլովական ձևերի պատմական զարգացումը:

«Ներածության» մեջ Է. Թումանյանը նախ հիմնավորում ու ցույց է տալիս հայերենի հոլովական ձևերի պատմական ուսումնասիրության կարևորությունը, նշում այդ բնագավառում հայագիտության ձեռք բերած որոշ նվաճումները և ապա՝ ավելի հանգամանորեն խոսում է իր հետապնդած գիտական նպատակների, աշխա-